ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 07 » « ապրիլի » 2016թ.**
ժամը 12 ⁰⁰

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ. Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ. Զոհրաբյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Վ. Կիրակոսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լ. Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Ռ. Հակոբյան

1. Տեղեկություն «ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

1.1. «ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 2450000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Տեղեկություն «ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2.1. «ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2016 թվականի ապրիլի 7-ին, ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

(Ռ.Զոբանյան)

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
«ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ	ք.Երևան, Զավարյան փող. 1ա շենք, 54 բն
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ք.Երևան, Հալաբյան 41ա

4. Հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Ռ.Զոբանյան)

4.1. «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊ և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությունների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ռ.Զոբանյան)

5.1. «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊ և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությունների կողմից առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Ռ.Զոբանյան)

6.1. «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊ և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկած գները

Մասնակցի անվանումը	Գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ-ի գումարը	Ընդամենը
«ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ	1 450 000	290 000	1 740 000
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 460 000	292 000	1 752 000

7.1. «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊ և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությունների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1. «ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

9. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

9.1. «ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին:

10.Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

10.1. Հանձնաժողովի քարտուղարին՝

10.1.1. Ուղարկել հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ և «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊ ընկերությունների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի վերաբերյալ:

10.1.2. Ծանուցել «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊ-ին՝ Հրավերով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի ապրիլի 11-ը, էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին, Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու համար Հրավերի Հավելված 5-ով նախատեսված գրությունը, որին անհրաժեշտ է կցել կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք (Հավելված 5.1): Տեղեկանքին անհրաժեշտ է կցել հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

10.1.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը, ինչպես նաև Հրավերի 1-ին մասի 7.5 կետի 2-րդ ենթակետը, ծանուցել «ԳԱԱ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ին, ներառյալ 2016 թվականի ապրիլի 11-ը, ներկայացնելու լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

11. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ռ.Զոբանյան)

11.1. «ՀՀ-ԲՆ-ՊԸ-ԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2016 թվականի ապրիլի 14-ին, ժամը 11:00-ին, ք.Երևան, Կառավարության 3 շենք, 5-րդ հարկ, ՀՀ Բնապահպանության նախարարություն, 514 սենյակ հասցեում:

12.Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) _____ Ռ. Զոբանյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Լ. Զոհրաբյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Վ. Կիրակոսյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Լ. Ավետիսյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Հ.Հովհաննիսյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) _____ Ռ. Հակոբյան